

լով, եւամ ու դիմեցին վանքին միւս կողմերը: Շատ պիտի երկարէր գրութիւնս, եթէ մամրա- մաս միւս ամէն սցեցութեան տեղերն և իրենց խօսքերն յիշատակէինք: Բայց չի մոռնամք յիշելու տպարանին այցելութիւնը: Վանատունէմ՝ արքայական խումբը աւաջնորդուեցաւ տպարան, ամբողջ մեքենաները աշխուժով կը գործէին, և աշխատաւորք իրենց աշխատանաց կը պարապէին: Բոն տպարանը ընծայեց թագաւորին Սխուսմի գղ. թարգմանութիւնը շքեղ և ոսկեդրուագ կազմով: Թագաւորն ուրախութեամբ ընդունեցաւ այդ փորձիկ ընծան ուր, պիտի տեսնէ Հայոց փառաց՝ չըսեմք վերջաբանը, այլ ընդհատումը:

Թագաւորը ու Թագուհին սքանչացան իրենց հիմաւորց Հայ պամբուխներուն գործունէութեան վրայ, ուրախութեամբ դիտեցին ամէն կողմ և իրենց գոհութիւնը յայտնեցին մեր Վեհիմ:

Մինչդեռ թագաւորին կ'ընծայուէր Սխուսմը, յամկարծ յիշեցի ամոր հեղինակը. ուր է՞ր Ալիշան. արքայական անակմկալ այցելութիւն մը որ այնքան ուրախ յուզում, շատաւ, շքեղաց պատմաւած էր, ամբողջ վանականը շարժման մէջ էին, քայց ուր էր Սխուսմի հեղինակը. մա չի լսեց ոչ ինչ. մա չիմացաւ ոչ ինչ: Արքայական խմբի թագմութիւնը ամոր սեննակէն անցաւ, դարձաւ, քայց մորէն չսեց ոչ ինչ. ինչ աստիճան յափշտակութիւն. մա իւր խուցն էր, և ամշուշաւ այն վայրկեաններուն մէջ, յորում իւր յափշտակութիւնը ոչ Աւարայրի պայպուլ, ոչ ուր քունական մերկայութիւնը կրնայ վրդովել: Նա չի լսեր ու չի լսեց ոչինչ:

Այս խորհրդածութեանցս ժամանակ մեր մեծ հիւրերն տպարանէն մեկնած և պարափզի մէջ մեծ շրջան մը կատարած էին ու հասած վանքին դուռը:

Թագաւորն ու թագուհին, մեր Վեհէն սկսեալ մինչեւ ամենէն փոքր վարպետներն ձեռքերն սեղմելով, իրենց սիրոյն հուրը դեռ աւելի արծալծեցին մեր կուրծքին վառարանին մէջ, ու հեռացան միգով, ընդունելով վանքին երախտագիտութեամբ զորդարուած ջնորհակալիքը. ու զանգակներու և դրօշներու յարգամայց ողջոյնները:

Հ. Ս. ՆՐԵՄ.

ԱՐՅԵՎԱՌԻՐՅԻ ԱՌԱՍՊԵՆԷ

Ե Ի

Ս. ԱՐԻԳՍԻ ՏՕՆԸ

ՍԵՐ եկեղեցական պատմութեան մէջ՝ վարդապետական քանի մը խնդրոյ նիւթ եղած կէտերու հաւասար, նշանակութիւն ունեցած են նաեւ Ս. Սարգսի տօնը և Առաջաւորաց պահքը, իրենց՝ Յունաց և մեր մէջ յարուցած հակառակութեանց պատճառաւ: Երկուստեք Հնուց ի վեր գրութիւններ հրատարակուած են, երբեմն եղբայրաբար դիտար խորանելու և ճշմարտութիւնը լուսաբանելու համար. երբեմն ալ (գրեթէ միշտ Յունաց կողմանէ) ատելութեան և նախանձու ոգով պրգեալ՝ մէկմէկ նախաեղու, մէկմէկու դէմ նորանոր հակառակութիւններ պրգեղու համար, շիղհելով նոյն իսկ անոց անձինք ստեղծելու և տգէտները խաբելու համար՝ դանոնք մինչեւ իսկ եկեղեցական ամենաբարձր աւագութեանց հանելու, անարժան դրութիւններ անոնց անուամբ պատրուակելով:

Այսպիսի խնդաստեղծ անձանց մէջ, եթէ ոչ գլխաւոր՝ սակայն և ոչ ալ երկրորդական տեղ մը կը գրաւէ Սահակ անուամբ Մեծին Հայոց կաթողիկոս մը, ԺԱ-ԺԲ դարուց միջոցին, որուն կ'ընծայուի յունարէն ընդարձակ գրութիւն մը, ճառ ընդդէմ Հայոց անուանեալ. որ և ըստ վկայութեան մեր նոր Պատմահօր «է լցեալ ծայրէ ի ծայր յիմաւրաբանութեամբ և հայհայտութեամբ և ծայրագոյն ատելութեամբ»:

1. Գիրքը տես ամբողջութեամբ առ Migne, Patr. gr. հատոր 132, դարձեալ մասամբ մը ի գիրս Կղմէս Գալանոսի, հատոր, Բ. Գրութեան ստուգութիւնը ինքնին կը յայտնուի երբ կը դեռնէր որ ԺԱ-ԺԲ դարերու մէջ, երբեք Սահակ անուամբ կաթողիկոս մը ունեցած չենք: Գրաբեալ, փոխանակ Առաջաւորի քրքածուած

Բազմահմուտ Հ. Չամչեանի յիմարարա-
նոսրիսն կոչածներէն առաջինը կրնանք հա-
մարիլ Առաջաւորաց պահոց վրայ յարմար-
ցուած առասպելն, զոր կը կարդանք սոյն
Սահակ կաթողիկոսի վերոյիշեալ գրքին մէջ,
նառ Ա. գլուխ ԺԴ. Բերլ տիչ $\sigma\alpha\tau\alpha\nu\iota\kappa\eta\varsigma$
νηστείας τοῦ ἀρτεΐβουρου (յաղազս դիւական
արցիվորաց պահոց) վերնագրով:

Թողլով առ այժմ՝ Ս. Սարգսի տօնը՝ որ
արդէն իսկ բոլորովին կուտարանուած է ա-
մենուն ծանօթ է¹, զբաղինք քիչ մը ար-
ցիվորացով:

Ինչ է այդ արցիվորացն. —

Լսենք նախ և ապա քննենք համառօտի-
ինչ որ կը պատմէ Սահակ Հայոց կաթու-
ղիկոսն, այս նիւթիս նկատմամբ. կը գրէ նա.

« Լսեն ամաբարշտաց այս մուր խաբէու-
« թիւնները, ամենայն սուտանուն ըրիստո-
« նեայք, և ստուգեամք ուղղափառ համա-
« րուածք, որոնք ուրախութեամբ կը պահեն
« արցիվորացի մահաթոյն պահը... Սար-
« գիս անուամբ մէկը, Հայոց մուրուրեան
« վարդապետ, շուն մ'ունէր արցիվորաց ա-
« նունով: Սակայն այս բառս կը նշանակէ
« առջեւէն գացող (Առաջաւոր): Սարգիս առ-
« տանային ազգեցութեամբ այս շունը կը
« զործածէր իբրեւ իրեն զալստեան անետա-
« բեր և յայտարար, երբ գիւղ մը կամ բա-
« ղաք մը կամ տեղ մը պիտի երթար՝ ուր
« իր մուրուրեան ծանախախտէ բռնուած ա-
« շակերտներ կը քնակին. երբ ասոնք կը
« տեսնեն շունը՝ յաջորդ օրը թափօրով

« քանի մը մղոն տեղ ընդ առաջ կ'իլլին
« իրենց վարդապետին: Անգամ մը երբ
« շունը սովորական պաշտօնով տեղ մը
« զրկեց, գայլերը ճամբան զայն պատանե-
« ցին. Սարգիս երկրորդ օրը երթալով՝ ուր
« որ շունը զրկած էր, և տեսնելով որ ոչ
« ոք իրեն ընդ առաջ ելած է, ինչպէս առ-
« վորուծին էր, սաստիկ բարկացաւ: Քա-
« ղաքը մտնելով երբ իմացաւ թէ իւր յա-
« ռաջընթաց շունը հսն չէ հասած, մարդիկ
« զրկեց որ փնտռեն, և գտնուած ոսկրներէ
« գուշակելով թէ գայլեր կերեր են զայն,
« հրամայեց ամենայն Հայոց՝ որ ամէն տա-
« րի, սահմանեալ օրեր, անոր մահուան
« համար ծոմ պահեն ու մեծ սուգ բռնեն.
« և այս պահքն ալ անուանեց արցիվորաց
« պահք »:

Ահաւասիկ սոյն ծագրական առասպելն է
որ այնքան հակառակութեանց և ատեղու-
թեանց և սրբոց դէմ ալ անուր հայէջողու-
թեանց պատճառ ու զրգիւ եղած է Հայոց
և Յունաց մէջ. և այնքան խոր ազդրուած
է յետիններուս մտաց մէջ, որ նոյն իսկ իրենց
ժամագրոց և այլ եկեղեցական գրոց մէջ
այս նկատմամբ զգուշութեան ազգեր սփռած
են, միշտ սատանայական և զրոհելի կոչե-
լով Առաջաւորաց պահքը: Այսպէս 1874ին
ստպուած ճաշոցի² մը մէջ կը կարգանք.
Δεῖ γυγνώσκειν, οὐ εν ταύτῃ τῇ ἐβδόμῳ, διὰ
τὴν τῶν ἑτεροφρόνων νηστείας τοῦ ἀρτεΐβου-
ρου, ἥμεις καθ' ἑκάστην κατὰ λόμεν ἄπαντα
« պէտք է գիտնալ որ այս շաբթուս մէջ,

արցնոր, ճարցիտարի, արցիվորաց բառերն կը
մատենեն խաբախողին յունազգի մէկը ԸԼԱ-
Թ. Ինչպէս և հաւանականօրէն կը համարուի
թէ ԸԼԱյ կամ Իււաթիստ, երկուստեաներորդ
դարու հեղինակ, և կամ Կալլիստոս՝ ՓԻ դա-
րու մատենագիր, որոնք երկուքն ալ զեռ շատ
նմանութեան կ'այոց դէմ ատեղութեան և նա-
խադանաց զորութիւններ ձգած են:

1. Ճմարտիս և ընդարձակագրոյ տեղեկութեան
փափաքողք կրնան կարգալ Չամչեան. Պատմ.
Հայոց • հատ. Ա. 438-440 և 691-693. Չար-
ձեալ՝ Աւգերեան — Լիւկասար Վարբ Սրբոց

հատ. Բ. 3-44, մահաւանդ ծանօթութիւնքը
44 էջէն մինչեւ 65:

2. Τυπικόν. Ընդարձակ գիրք մ'է, յորում
տարւոյն առաջին օրէն սկսեալ մինչեւ ցգիւ-
ղինը, որոշ և ընդարձակ դրուած է թէ իւրա-
քանիւր օր ինչ պատարագ պիտի ԸԼԱին, ի-
րեն ընթերցուածով, աւետարանով, և սարգքն.
ինչ սաղմոսներ, աղօթքներ պիտի ըսուին ի
ժամերգութեան. ո՞ր օրերը ծոմ կամ պահք
պիտի պահուին, և երբ ու ինչպէս պիտի լու-
ծուի, և այլն:

այլափառաց արցիվուրի կոչուած պահքին պատճառաւ, մենք ամէն օր կը լուծենք բռ-

Χρή γινώσκειν, ὅτι ἐν ταύτῃ τῇ ἑβδομάδι νηστεύουσιν οἱ τριακατάρατοι Ἀρμένιοι τὴν βδελυρὰν αὐτῶν νηστεῖαν τὴν λεγομένην τοῦ ἀρτξιβουρίου· ἡμεῖς δὲ καθ'ἑκάστην ἐσθίμεν τυρὸν καὶ ὠά, ἀνατρέποντες τὸ ἐκείνων ὄγγμα τῆς τοιαύτης αἰρέσεως.

Գոչենք վարդեան մը Nillesի հետ զարմացմամբ Ita scilicet Magna ecclesia CPolitana tandem, Triodio hoc usa, haereses non docendo, sed comedendo evertere se gloriabatur! և անցնինք փնտռելու թէ ո՞վ արդեօք կարելի է ըլլալ այդ Սարգիսն, և ապա քննենք համառօտիւ թէ էրբ և ի՞նչ պատճառաւ սկսած է Առաջաորդաց պահքն:

Քննելով մեր պատմութիւնը, կը հանդիպինք եօթնեքորդ դարու մէջ, Յովհ. Մայրապետմեղայն աշակերտ Սարգիս անուամբ մէկու մը, որու վրայ ըստ ամենայնի կարելի է յարմարցուած համարել այդ առասպելը, ինչպէս և իւր վարդապետին վրայ պատմուած նմանօրինակ առասպելներ պակաս չեն. այսպէս՝ Կիրակոս անձանթով պատմէ մը փոխ առնլով կը պատմէ թէ երբ էր կաթողիկոս Հալածեց զՄայրապետմեցին, սա զնաց մենացաւ ի կողմանս Գետայ բաւորեալ, և հոն մեծամեծ սքանչելիք կատարուեցան ի վկայութիւն իրեն սրբութեան. ունէր սա էջ մը որ վանքին պիտոյից կը ծառայէր. անգամ մը արջ մը պատահելով, կերաւ զայն. Մայրապետմեցին զայս լսելով, գնաց և ըսաւ արշուն. Որովհետեւ Կոս մեր սպասաւորը սպաննեցիր, անոր փոխարէն Կոս մեզի պիտի ծառայես: Արջն ալ հրութեամբ երկար տարիներ կը ծառայէր բեռնակրութեան և այլ ամէն պիտոյից: Ժամանակ անցնել վերջ՝ որսորդներ գտնելով արջը և վայրենի կարծելով՝ զարկին: Վանքի կրօնաւորները երբ տեսան, խոր փոս մը մէջ նստեցին արջը. և մինչեւ այսօր շրջակայ տեղեաց ճանկէք, արշուն թաղուած տեղէն հող կ'առնուն և իրենց ամէն ցաւաց բժշկութիւն կը գտնեն:

լորովին»: Հին տպագրութեանց մէջ աւելի ընդարձակ կը գտնենք նոյն ազդը.

« Պէտք է գիտնալ, որ այս շարքոս մէջ երկուս անթիւնայ Հայոց կը պահեն իրենց արցիվուրի կոչուած զարչելի պահքը. իսկ մենք ամէն օր կ'ոտենք պանիր և հաւկիթ, անոնց այսպիսի մոլորական վարդապետութիւնը մեր ժելով »:

Սոյն այս Սարգիսն է որ ոչ միայն ի Հայոց Հալածուած է, իւր մոլորութեանց համար, այլ նաեւ յայնքէ և ասորիներէ. և Սոփրոնիոս Երուսաղէմի պատրիարքը (որ ժամանակակից է մեր Եզր և Ներսէս Շինող կաթողիկոսաց) առ Սերգիոս Պոլսոյ պատրիարք զրած թուղթին մէջ, ամէն հերեւտիկաններու հետ յանուանէ կը նշովէ նաեւ զՍարգիս հայ:

Գալով առաջաւորաց պահքոց սկզբնաւորութեան, կարծիք և ենթադրութիւնք իրարու կը յաջորդեն ազգային և օտար մատենաւորաց ըզլ. Մեր մէջ ընդհանրապէս ասոր հաստատութիւնք ընծայուած է Լուսաւորայ. Զենոբ կը գրէ թէ « Յորժամ ել Ս. Գրիգոր ի Վիրապէն, ի զալ առ նա նախարարացն և թագաւորին՝ ժողովեաց զնոսա առ ինքն և հինգ օր թողու զնոսա անսուղղ առաջի իւր կայով և լսելով զվարդապետութիւն իւր. այս առաջին պահքս եղաւ ի Սրբոյն Գրիգորէ յառաջին աւուրս... զոր և առաջաւորք կոչմեք »: Նոյն հնգօրեայ ծամը կը պատմէ նաեւ Ազաթանգեղոս, սակայն առանց յիշատակութիւն մ'ընելու մեր այժմեան պահքին: Յայսմաւորաց մէջ եւս կը կարգադրէ (18, 29 նոյնմանք) « Հրամայեաց Ս. Գրիգոր պահէ ծոմով ամենեցուն զաւուր հինգ. և նոյն աւանդութիւնն է մինչեւ ցայսօր ժամանակի, զոր և առաջաւորք կոչմեք ». նոյնպէս կը գրէ նաեւ Ստեփանոս Ասողիկ: Շնորհակալն ալ իւր առ Ալէքս կայսր ուղղած նամակին մէջ, յետ ըսելու թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ վերապէն ելլելով Հրամայեց ամեն նուն առհասարակ հինգօրեայ ծոմապահութիւն, այսպէս կը յաւելու. « Եւ զայս պահքս... նոյն ինքն Լուսաւորիչն աւանդեաց յեկեղեցիս Հայոց զնոյն պահէլ յամենայն ամի

շրջագայութեան, որպէս զի մի մոռացին երախտիքն Աստուծոյ եղեայ առ նոսա, Եւ պատշաճ համարեցան խառնել զպահս զայս՝ որով Հայք ընկալան զգիրութիւն, ընդ պահս հոց նիւնուացուց՝ որով նորա ազատեցան ի սպաճալեաց մահուանէն, զոր և պահեն մինչեւ ցայժմ ազգ ասորոց և եգիպտացուց»։ Սակայն Ս. Գրիգոր Նարեկացոյ միջոց խընդիր ելնելով այս նիւթիս վրայ, նոյն ժամանակի վարդապետներէ ոմանք կ'ըսէին թէ Ս. Կիրիւզ Երուսաղեմացին հաստատած է զայս նորոշմայ երախտիք պատրաստութեան համար¹։ Իսկ Գևորգ վարդապետ՝ կը պնդէր թէ նախ Յակովբոս առաքեալ Եղբայր Տեառն հաստատած է զայդ, և ապա Ս. Կիրիւզ երկրորդ անգամ նորոգած։

Ներկայիս՝ ճշմարտութիւն մը հաստատել ստուգապէս, զեռ եւս անկարելի կը թուի, միայն կը յիշեցնենք ինչպէս լաւ կ'անդրաբարձունէ Չամչեան, որ այս պահէր ամէն բարեառտնեայ ազգաց հասարակ էր հին ժամանակները, մեծպահոց պատճառաւ. որովհետեւ ինչպէս եկեղեցական նախնի մատենագիրներէ կը տեղեկանանք՝ վեցերորդ, եօթներորդ դարերէն սկսեալ՝ ոմանք բառասիրողական պահէր ինը շաբաթ կը պահէին, ուրիշներ ալ տասը՝ կիրակի և շաբաթ օրերը լուծելով։ Իսկ երբ այս սովորութիւնը՝ բիշ դարեր տեսելէ վերջ խափանուեցաւ և առհասարակ եօթը շաբաթ սկսան պահել բառասիրողներ, շաբաթ և կիրակի օրերով հանդերձ, անկէ առաջ շաբաթապահէր մ'ալ պահեցին, զոր ոմանք պահէր նիւնուացուց կ'անուանէին, ոմանք ալ պահէր գալստեան Տեսան։ Այսպէս Հայոց մէջ ալ՝ այս պահէին տեղ նորէն հաստատուեցաւ Լուսաւորչայ սահմանաժող, և ըստեցաւ պահէր առաջաւորաց, ազգային առաջին պահէն ըլլալուն կամ ազուհացից

օրերէն առաջ ըլլալուն պատճառաւ. զոր ոմանք զեռ Յիւնուեացու կամ Նիւնուեացուց կը կոչեն առաջիկայ ուրբաթ օրուան յիշատակաւ Ասորոց սովորութեան համեմատ, և այլք աւելի ազգային յիշատակաւ մը՝ կ'առանան Ս. Սարգսի պահէր, անմիջապէս իր տօնէն առաջ հանդիպելուն համար։

Հետաքրքրական է ինչ որ զըջադիր Տեապետճառ մը մեր զբաղած նիւթին նկատմամբ կ'աւանդէ. յետ ըսելու՝ (Իբրեւ Ս. Բարսեղի խօսք) ի դրախտին օրինադրեցաւ, և հաստակից է մարդկութեանս. կը յաւելու. «յորժամ ելաւ Արամ ի դրախտէն, ասն, թէ մահու մնալով ոչ կամէր ուտել ինչ, և յետ հինգ աւուրց զթացեալ Տէրն, հրամայեաց հրեշտակի միում միխիթարել զնա. և խոստանալով զՄիածնին առաքումն վասն փրկութեան նորա, և հրամայէ ուտել ի վայրաց պտղով։ Զխոստումնս զայս ասէ Դաւիթ. Յիշեալ զման ծառայի բո որով յուսացուցեր զԱղամ»։

«Ասի դարձեալ թէ առաքեալն Հօր կամեցան գնել զպաքն (բառասիրողաց) ըստ թուոյ նախահարցն ըստ Ղուկայ։ Ապա նորահաւատքն տրանջեցին վասն բազմութեան, իսկ առաքեալն բարեկենդանացուցին զԲ. շաբաթն և զայս ամի ամի պահէր հրամայեցին, Մի՛ծ պահեցն առաջաւոր անուանելով, Այլ(ք) ասն Հօր կարեցին առաքեալն, երբ մէկ շաբաթ պահեցին իմացան թէ Բ. փառ կամի լինել. մին ընդ հրէիցն լրմանն չմիաբանէր. և մի որ ի ներք հառաքակածին զայր շաբ(աթ)անքն տեսան, կամ ՀԵ պիտէր պահել. և խորչէին հաւատացեալն, ապա զԲ շաբաթն բարեկենդանացուցին և յետ ժամանակի միծն Կիրիւզ գնոյն արք (արքա ընդ ?) զեկեայսն ի մկրտութիւն առ նա, ընդ որս էր և Ակակ պարսիկ, հինգօրէ պահօք փորձեաց,

1. Նոյնպէս մի քանի Յայտմաւորաց և այլ զըջադրաց մէջ ընծայուած կը գտնենք Ս. Կիրիւզի, այլ ԲՆԷ հիմամբ՝ չենք զիտեր։ Իսկ իբր պատճառ հաստատութեան պահոցս՝ մէջ բեւրենք այլ և այլ կարծիքներ Անաստաս Կեսաւրացի կը համարէ Սարգսի կամ Արգիշտի մը՝ առանց ըսելու թէ ո՞ր է այդ. Պաշտամուն և այլք

(զլխաւօրապէս ասորիք և եգիպտացիք) ի յիշատակ Նիւնուեացուց. ոմանք Արամայ ի դրախտէն արտաքուսեցուն, և մինչեւ իսկ Մեծին Կոստանդինոսի ի Հռովմ Ս. Սեղբեւորոսէ մկրտուելուն յիշատակաւ հաստատուած կը համարեն։

և զԲ շաբաթն ուտել հրամայեաց, և երախացուցեալ կարգեաց զքնթերցուածնն ի յուսումն նոցա: Յետ ժամանակաց բազմաց, Սուրբն Սարգիս ի զլուխ առաջաւորաց պահոցս նաւհատակի ի Շապհոյ պարսից արքայէ ի յունուարի լսն, մարտիրոս անուն որդովն ի յուլիանոսէ փախտական եկեալ առ Տիրան արքայն Հայոց. և անտի առ Շապուհ և կատարի վասն Քրիստոսի: — Եւ մեք պահէք նմա ոչ անուանեմք այլ առաջաւոր: Այլ որպէս առաջին շաբաթն Թէոփորոսի տօնեմք, և աստ նոյնպէս զպահքս Աստուծոյ պահեմք և տօն սուրբ Սարգսի առնեմք: Եւ որպէս զինուոր վերակացու տէրունի աւուրցս և վրէժնդիր չպահողաց և պատուհառող: Եւ Քրիստոսի փառք»:

Հ. Յ. ԱԽԳԵՐԵԱՆ

Մ Խ Ի Թ Ա Ր

(Շար. տես էջ 509)

ՆԱԶԱՐ վեց հարիւր իննըսուն և վեց Տարին էր հասիւր, տարի շրջեղ, մեծ, Ուր կուսական սուրբ շրթներուն բարբառ Պէտք էր որ անուր իւր լըրումն անձառ:

Անցան մըրրիկներ ու պէս պէս հովեր, Անցան զանազան ցաւեր ու վիշտեր, Եւ բազմակոշկոն կենաց վարագոյր Ալ պէտք էր պարզիլ, փայլել ոսկեթոյր:

Լեռներ ու ծովեր կըտրող մէկուն պէս, Որ շուր մը նըստած՝ իր ուղւոյն ի տես, Սիրան հոգին հըրճուի, ու պահ մը մոռնայ իւր բոլոր վիշտերն, ու կամարին վրայ

Ուր կախած տեսներ ամպոց կոյտեր սեւ, Յանկարծ նըշմարէ լուսափայլ արեւ. Սապէս Մըլիթար իր ծրփուն կեանքին Տեսներ կոհակներն՝ որ խաղաղէին:

Ի զո՛ւր էր այլ եւս ըլլալ զիմպարձ, Յայտնի է ծածկուած զանձը սուր բըրաց, Պէտք էր խոնարհիլ երկնից սուրբ կամքին, Ունկընդիր ըլլալ զինք կոշող ձայնին:

Սուրբ Նըշան վանքին կոշնակն հոգեխօս կանչեր է արդէն բազմութիւն մը հոծ, Գունդագունդ դիմեն ամէն կողմերէ, Նոյն այն ձայնն է որ զամենքը զըրդէ:

Խորան կը տեսնեմ խորան լուսեղէն, Ամպամած բոյրի ու խունկի ծուխէն, Ու ամպին մէջէն տեսնեմ վե՛ն խորհուրդ, Որ կը կատարուի՝ սուրբ սըրտից յապուրդ:

Ողջակիզին սուրբ ճենճերն ու սուրբ բոյր Պատուր է արդէն զերկնից վարագոյր, Ու աղանակեալ ի՛նչ սուրբ Հոգին, Վառել ու սըրբել զայն սիրտ կաթոյգին:

Ողջոյն քեղ, ո՛վ նոր զեւտական զասուն Ամբիծ ու քընքուշ տաքարակ չոգեսուն, Որ հրածեշտ տալով աշխարհի՛ բաժն բաժն ի հեղ ուսդ առիւ՛՝ հեղուկ փըրկշին խաչ:

Ահա կը մընչեն շրթներդ ամօթխած խաղաղութեան սուրբ հրաւերն հոգեսաց. Ու կըրից կոյտ կոյտ կոհակք ու կոշկոտ խաղաղին, ախրէ նուիրական անդորդ:

Սատան ու մարմին խոյս տան զըլխակոր, Առած հաղբ ու ցանց, զէն վըտանդաւոր, Զի քան զամէն զէն՝ խաչն այն սպարաւոր Շողայ ու ցանէ սըրբանըւկը հուր: . . .

Ժամանակն հասած էր որ նա այլ եւս Գօտալընդուկով մըտնէր ի հանդէս, Եղիցին իւր ներսն հուր ու բոց վաւեր, Պէտք էր նետն իրեն նպատակին հասնէր:

Քահանայական պաշտօնն ըստանձնած Ելաւ քաղցեւոց բաշխել հոգւոյ հաց, Այր համեղ ճաշակն առ ինքն ըսկընաւ Զըզել հոգեւէր անձինքներ տակաւ:

Ահա պատանի մ՝ անուն Յովհաննէս Թողլով՝ նըշանածն իրեն փութապէս